

Լուսինե Վ. Տոնոյան

ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԱԶԳԵՆ ՇՈՒՇԱՆՅԱՆԻ ԲԱՆԱԶԵՎԸ

«Գարնանային սիրո հեզ նամակներ» վիպակում*

հոկտեմբեր-դեկտեմբեր, 2012
Գ (Տ) քառի, թիվ 4 (40)

ՎԷՄ համահայկական հանդես

Եվրոպական գրականության մեջ 18-րդ դարի կեսերից լայն տարածում գտած սենտիմենտալիզմը (նախառոմանտիզմ) աշխարհը դիտում էր հուզականության, զգայականության տեսանկյունից, որի քննարկման առանցքը մարդն էր՝ իր հույզերով ու սպրումներով: Այս գրական ուղղության ձևավորման վաղ շրջանում հատկապես տարածված էր նամականու ժանրը, որի միջոցով ռոմանտիկները առավել հեշտությամբ էին արտահայտում իրենց հայացքները:

Չսայած այն հանգամանքին, որ այսօր նամականին մարող գրական ժանր է, այնուհանդերձ պետք է ընդունել, որ գրականության զարգացման պատմության մեջ այն խաղացել է նշանակալի դեր: Մի գիծ կարծես ընդհանուր է բոլոր գրողների համար, ովքեր անդրադարձել են այս ժանրին. նրանք տրվում են գրչի հորձանքին ամբողջությամբ, ձուլվում են ռոմանտիկական նյութին, իրենց վերագտնում իբրև գործող անձ, հերոս:

Ֆրանսահայ գրող Վազգեն Շուշանյանն իր «Գարնանային սիրո հեզ նամակներ» վիպակում փորձեց պահպանել և զարգացնել այս դասական-բարոյագիտական նամականի-վեպին բնորոշ առանձնահատկությունները: Նա ընտրեց նամականու ժանրը՝ որպես ապրումի և գեղագիտական ու քաղաքական հայացքների արտահայտման ձև: Շուշանյանը գիտակցաբար մտավ ժանրի խորխորատների մեջ, որպեսզի տեսնի իր գրողական վարպետությունը ծավալելու ուժը:

«Գարնանային...»-ը սիրո ձևավորման պատմություն է, բայց միայն հոգեբանական ու զգայական դիտանկյունից: Ինչ խոսք, ինչպես հուշում է վիպակի վերնագիրը, մեր առջև սիրային գողտրիկ նամակների հավաքածու է՝ գրված խոր հուզականությամբ, բայց նայնպես «ամենավտանգավոր» պահերին երբեք հեղինակային սթափությունը չկորցնողի վարպետությամբ: Շուշանյանն այն հեղինակն է, ում ասելիքը հաճախ չի երևում տողերի մեջ, այլ ստեղծագործության ծալքերում ու ենթաշերտերում պիտի

*Հոդվածն ընդունվել է տպագրության 30.11.2012:

որոնել բուն գաղափարը: Այստեղ է, որ առաջ են քաշվում նոր հարցադրումներ:

«Գարնանային...»-ը, իրավամբ, լի է սիրո, կրքի բռնկումներով, սակայն Վազգեն Շուշանյանը սերը ծառայեցրել է՝ բացելու համար մշակութային ընկալումների որոշակի շերտեր և հայացքներ: Չունենալով դիպաշարի ավանդական զարգացում՝ «Գարնանային...»ը լիարժեք պատկերացում է տալիս 1920–1930–ական թթ. Սփյուռքում անընդհատ փոփոխվող բարոյական արժեքների մասին: Այստեղ ամենից առաջ, կարմիր ժապավենի նման ձգվող, մի ողջ սերնդի ու մաքառող հայության կենսագրություն կա, քաղաքական դիրքորոշումների ու տեսակետների արտացոլում, անհատի դժվարին պայքար՝ հաճախ անտեսանելի թվացող ներքին ու արտաքին աշխարհների միջև:

Շուշանյանի հերոսները, ընդդիմանալով ժամանակի բերած մարտահրավերներին, օտար միջավայրում ազգային նահանջի և բարոյական գահավեժ անկումի դիմաց ներկայացնում են սիրո վեհությունը: Հեղինակն այս ամենը դիտում է հեթանոսության՝ գեղեցիկի ու ազատության քննության լույսի տակ: Նա համոզված է, որ բավական չէ տեսնել, որսալ, նկատել գեղեցիկը, այլ պիտի կրել, յուրացնել ու հարստանալ գեղեցիկով¹:

Ինչպես իր մյուս ստեղծագործություններում, այստեղ ևս նա շեշտադրում է հեթանոսական գրական շարժման հատկանիշները՝ այդ ավագանում հաստատելով ազգայինը պաշտպանելու եղանակը, գեղեցիկը, բնականը, մարդկայինը: Շուշանյանի խորին համոզմամբ՝ սերը պիտի մնա ազատ, առանց կաղապարների ու կապանքների: Երբ սերը «բանտարկում ենք», դրանով «ապականվում է» մարդկային գեղեցկության ակունքը: Իսկ սերը «կաղապարել» սկսել ենք քրիստոնություն դավանելուց հետո. «Ապականած ենք մենք մեր սերը քսան դար է ի վեր: Նենգութին, ախտեր ու չարաշահութիւն կայ հիմա աշխարհի բոլոր տողոց ու բոլոր աղջիկներուն արտերուն մէջ: Նազովրեցին՝ տառապանքի, չարչարանքի, ինքնախաբազանումի հասկացողութիւնը բերաւ մարդկութեան: Սէրը՝ որ իրմէն առաջ մեհեաններուն մէջ կը պատարագէր ու անտառներուն մէջ կը ցնծար՝ թաքչեցաւ մութ ու բուրաւէտ խուցերու մէջ»²:

Այս մտայնությունը դառնում է մայր գաղափար գործողությունների զարգացման հետագա ընթացքում. հեղինակը հետապնդում է այն իր գրեթե բոլոր երկերում: Գուցե դրա համար է, որ հաճախ չի հասկացվել ու քննադատվել է Վ. Շուշանյանը, քանզի նա այս դժվարին ճանապարհով փորձում էր բարձր մնալ առօրյա հարաբերություններում, անարժեք ու անբովանդակ շփումներում:

Այս առումով ծրագրային նշանակություն է ստանում հերոսների ընտրությունը՝ **Վահագն** և **Աստղիկ**: Ինչպես նկատելի է, Վ. Շուշանյանը գիտակցաբար միավորել է հայոց դիցարանի ռազմի և սիրո աստվածներին, որոնք, ըստ ավանդության, սիրեցյալներ էին: Մրանով հեղինակը փորձել է ներկայացնել ուժեղ և մարտնչող տղամարդու, գեղեցիկ ու դյուրիչ կնոջ մաքառումը օտար միջավայրում արձանագրվող նահանջի դեմ: Այսինքն՝

1 Տե՛ս **Վազգէն Շուշանեան**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, Պէրոյ, 1956, էջ 47:

2 Նույն տեղում, էջ 78:

ապաստերած կյանքի մեջ հանկարծ հայտնվում են հին շրջանի ոգիները: Նրանք ներկա օրեր են բերում հեթանոս սիրո բացարձակությունը՝ իբրև ապտակ նյութականացած հոգեկան կապերին, խեղձած բարոյական արժեքներին, որով հատկանշվում է ժամանակը. «Ո՞ր են մեհենական հրաշալի ու քաղցրունակ աղջիկները: Ո՞ր են Աստղիկի, Աթենասի, Արտեմիսի, մերոսկիածին ու ոսկիամայր Անահիտի ու բոլոր հեթանոս ժողովուրդներուն, բոլոր հեթանոս աստուածուհիներուն հէքեթանոսակ ու ծաղիկէ գօտիներով քրնուհիները, ըսէք, հէքեթանոսներու աղջիկը: Չկան, չկան ձեր բարի, նուիրուած ու սպիտակ աղջիկները»³:

Սրան ի հակադրություն՝ անշուշտ, ավստասնքով, հավելում է. «Դուք, հէքեթանոսներու աղջիկը, դուք պէտք է գիտնաք, թէ հեթանոս և ասպետ մեր նախնիքները սիրոյ պահէն յետոյ խաղաղութեամբ կ'իյնային իրենց վարդէ անկողիններուն վրայ: Հիմա՝ մենք սիրոյ տուներէն դուրս կուզանք գլուխնիս ծուռ, կորակոր, դանդաշելով, նայուածքնիս նետելով գետին: Ու բոլոր մեղքերը՝ բոլոր անառակութիւնները, բոլոր լկտիութիւնները գերազանցաբար մեր ստեղծագործութիւններն են»⁴:

Վ. Շուշանյանի մոտ ըստ էության աղջկա կերպարը գործուն տարրեր չունի, ավելի երկրորդված է, գործողություններին համընթաց, իսկ տղան ընթերցողին ներկայանում է առավել ընդգրկուն ու բաց հոգեաշխարհով, գործողությունը ուղղորդող: Վիպական պատմության սկզբում տարագրյալի ճնշված մորթի տակ Վահագնը խեղձացած է, անհամարձակ, երկյուղած ու կաշկանդված: Օտարության մեջ ապրողի բարդոյթները նկատելի են նրա վարքագծում ու հայացքներում: Այնուհետև, ինքնահատուտաման քարքարոտ ճանապարհին նա բացվում է, դառնում պոռթկուն, ընդվզող, բաց ու արևմտահայերենին ընտանի բառով՝ դեգ: Ըստ էության՝ Վահագնի արտաքին նկարագիրը ճիշտ և ճիշտ իր՝ Վազգեն Շուշանյանի ներքին բնութագիրն է, սակայն մանրամասնի «փոքրիկ» սրբագրումով. Վազգենը բարձրահասակ չէր: Կարելի է կարծել, որ Շուշանյանը ցանկացել է իր հերոսին ներկայացնել բացարձակին, կատարյալին մերձեցած՝ առավել գրավիչ, թեև կոպիտ ու բիրտ արտաքինով, որն ընդգծում է գրողի վերաբերմունքի սահմանը. տղամարդու «տգեղությունն» ու կնոջ «երթերային գեղեցկությունը» նույն շարունակական հարթության վրա են. «Տգեղ ու խիստ էին իր դիմագծերը: Բարձր ու արձակ էր իր ճակատը, բայց թեթևօրէն կորնթարդ: Այտոսկրերը դուրս ցցուած ու տոկուն: Կզակը ամուր ու անհաճոյ, ու կզակին գուշը սովորականէն աւելի լայն ու անշնորհ: Այսուհանդերձ տեսակ մը անսահման ու անպարագիծ խաղաղութիւն կար իր դէմքին վրայ, որ համակրելի ու տաք կը դարձներ զայն ու իր աչքերը անպայման աղոյոր էին, մեծ, սև, մելամաղձոտ ու բարի»⁵: Այդ աչքերն են ընդունում կնոջական ողջ հմայքը՝ սեռի ու քնքշության միասնությամբ:

Իսկ աղջիկը: Աստղիկին ճանաչում ենք ոչ այնքան արտաքին, որքան ներքին ու հոգեբանական տեսանկյունից: Անրջային էր՝ անաղարտ, թափանցիկ, անհասելի ու... «մտացածին»՝ հերոսի համար. «Սպիտակ աղջիկ

3 Նույն տեղում, էջ 78:

4 Նույն տեղում, էջ 79:

5 Նույն տեղում, էջ 33:

մըն էր, նրբամարմին ու արկածներու ծարաւ: Դիւրաշարժ, ձկուն, խռով ու սիրահար: Աղջիկ մը, որ սահմանուած էր տառապելու և սիրելու, առտուան մը լոյսին մէջ ծղող ծաղիկի մը պէս, որ երեկոյեան՝ իր թերթերը կը գոցէ: Ցայգաթիթեռի մը պէս, որ մինչև այգ պէտք է մեռնի»⁶: Կնոջ համար նույնքան կարևոր են ալեկոծ «արկածները», որոնք ներաշխարհ են կազմում:

Չնայած այն հանգամանքին, որ Վ. Շուշանյանի ստեղծագործություններում կանայք բացարձակի ընկալման սահմանում են, իսկ հեղինակին անհնար է պատկերացնել առանց կնոջ ու նրա աշխարհի, պետք է նկատել, որ բոլոր կանացի կերպարները անրջային երանգ ունեն, պատրանքային յուրօրինակ հանդերձ, իրենց մէջ տղամարդկանց համար կրում են սեռի հրավերի մեղամաղձը: Սա Վ. Շուշանյանի ստեղծագործություններին բնորոշ հատկանիշ է:

Արձակագիրը գործվանքով է խոսում Աստղիկի մասին, կարծես երկյուղելով, որ կարող է չքանալ երագը: Օտար, ապաբարո հասարակության մէջ աղջիկը միակ լոյսն ու մխիթարանքն է հեղինակի ու նրա «սովեր» Վահագնի համար: Նա այն երագային կինն էր, որ պիտի մարմին առներ նրանց կողքին: Եվ եթե Վ. Շուշանյանի «Առաջին սեր» և «Սիրո ու արկածի տղաքը» երկերում կինը և տղամարդը հեռանում են՝ սիրո աղբյուրին չհասած, ապա «Գարնանային...»-ում հասանելիությունը բխում է ջոխանտիկական բուն առաջադրությունից: Նույն հանձնառությունը բացահայտվել է, ի դեպ, ավելի ուշ գրված «Ճերմակ Վարսենիկ» վեպում:

Վահագնը և Աստղիկը իրենց փոխձանաչողությամբ լրացնում են հեղինակի գեղագիտական զինանոցի անհրաժեշտ տարրերը: Նրանք աշխարհին նայում են մեկ պատուհանից, միևնույն բարոյական արժեհամակարգի կրողներն են, և այն, ինչը կապում է նրանց, անցյալի ու հիշողության խորքով միտվում է վաղվա օրվան՝ ազգային կյանքի վերակազմակերպումի գիտակից քայլին: Երկուսն էլ ինքնության հաստատման ազգային խնդիր ունեն, և ֆիզիկական սիրո պահանջը գալիս լրացնում է կեցության իմաստները, դառնում մերթ առաջնորդող, մերթ լծակից: Այն օտարության ճանապարհին ներքին ազատության ու գեղեցիկի արահետի ոգեկան պաշտպանության կամուրջ է: Այստեղ նրանց ոգևորում և ուժ է տալիս հին (հեթանոս՝ մարմնի ու գեղեցիկի պաշտամունքով) ու նոր (նախաեղեմյան՝ ծննդավայրի, հայրենիքի պաշտպանության) գաղափարներով ընդգրկուն անցյալը, այն պատկերվում է սիրով, խանդաղատանքով, առանց դառնության տխրամած շեշտերի, անգամ մի տեսակ՝ եղեմական լույսով ողողված:

Վ. Շուշանյանի բոլոր գործերը հարուստ են նուրբ ու զգայական մանրամասներով, երբեմն էլ բաց պատկերներով, համարձակ բանաձևումներով: Սակայն «Գարնանային...»-ում գրողն այս ամենն օգտագործում է իբրև միջոց՝ օտար միջավայրում ինքնություն կերտող երիտասարդի ապրումներն ու զգացումները բացահայտելու համար: Ֆրանսիայում, անշուշտ, Շուշանյանը ճաշակել էր հայ մարդու ճակատագրի դառնությունները: Նա, սակայն, գիտեր սիրո արժեքը և չէր նույնացնում գաղափարի «նստվածքներին»։ «Սէրը պահ մըն է, պահը յաճախ յաւի-

6 Նույն տեղում, էջ 24:

տենականությունն է: Ազահ և յաղթական ձեռքերով ձերբակալենք պահը, որ կ'անցնի: Գինի խմենք ու արբենանք սիրով, որովհետև սէրը՝ սրտի գինի է ու մտքի հաց»⁷:

Այս կապակցությամբ Անդրանիկ Ծառուկյանը «Գարնանային...»-ի բնյրության հրատարակության առաջաբանում տվել է զգացմունքային և գաղափարական շերտերի հարաբերության թերևս ամենից դիպուկ գնահատանքը. «Ու բոլոր անոնք, որ գարնանային են դեռ ու կ'ապրին իրենց կեանքի գարունը, կարդալով այս գիրքը, այնտեղ պիտի զգան իրենց խենդ հոգիներուն տրուփը, գարունի վարար ջուրերուն շառաչը և արթնցող իրենց սրտերուն կարօտները, տենչանքները: Ու պիտի յիշեն, թե իրենց պէս քսանամեայ տղայ մըն էր Վազգէնը, երբ գրեց այս գիրքը, պատմելու համար գարնանային սէրերը Վահագնին և Աստղիկին, որոնց հոգիներուն և մարմիններուն մէջ գարունը կ'երգեր իր յալիտենական երգը, սիրոյ քաղցր ու մեղսական մեղեդին»⁸:

Վազգէն Շուշանյանը խորաթափանց հայացքով, սթափորեն գնահատել է իր ապրած ողբերգական ժամանակը, որը, ըստ նրա, բնութագրվում է սփյուռքահայի մեջ «հայաթափումի» հատկանիշներով. «Կ'ապրինք տխուր, ապաստանում ենք թանձր հասարակարգի մը մէջ: Ապուշ, անուրախ ու հին է մեր ժամանակը: Եւ մեր բոլոր խաւարչտին ու անբարոյ քաղաքներուն և գերի ու տրտում գիւղերուն մէջ՝ մեր օրերուն սև լոյսին տակ, մենք որ բոլորս որ կ'ապրինք, աղջիկներ ու տղաք, հեղգ ենք, ծեր, վաստակաբեկ, ապարախտ ու առանց ուրախութեան»⁹:

Վ. Շուշանյանի համար ողբերգական էր ոչ միայն այն, որ իր ժողովուրդը ցեղասպանություն տեսավ, այլև այն, որ մեկիկ-մեկիկ կորցնում է վերապրելու, տոկալու, այլ բառով՝ դիմակայելու հատկանիշները, քանի որ՝ «Այնքան թանձրամարմին ենք ու առանց խանդավառութեան, որ աղուոր ու մեծ աչքերով երազը առյաւէտ լքած է մեզ: Մեր յոյսերը մութ են ու առանց թռիչքի: Ցնորքներ չունինք: Մեր սէրերը հիւանդ են, գունաթափ ու հէք՝ մեր սրտերուն պէս...: Երգել չենք գիտեր ալ, ու մեր բառերը ցուրտ են, պատրանաթափ ու առանց բովանդակութեան»¹⁰: Հայրենի ենթահողից արմատախիլ արված հայությունը այլևս չի կարող ապրել իր արժեքներով, իր աշխարհընկալմամբ, որովհետև ներկան գորշ է, ապագան՝ անգույն ու աններագ. «Մարմինս տխուր է և յոգնած ու մեղմօրէն կ'արտասուէ իր տառապանքը և ես յոյսեր, երազներ և ցնորքներ չունիմ ալ: Օրերուս բեռը կը կրեմ դառնութեամբ: Որովհետև կեանքը հինցուցած է զիս»¹¹:

Վ. Շուշանյանը կասկած չուներ, որ հայն օտար միջավայրում այլ ելք չունենալով, պիտի հմայվեր արտաքուստ շողշողուն թվացող արժեքներով, որոնք պատիժ էին ու ետնաբեմ: Հեղինակը տագնապում էր այնպես, ինչպես Շ. Շահնուրը. «Կը նահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսայ, կը նահանջեն բարք, ըմբռում, բարոյական սէր: Կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն, կը նահանջէ լեզուն: Եւ մենք դեռ կը նահանջենք բանիւ

7 Նույն տեղում, էջ 77:

8 Նույն տեղում, էջ 11:

9 Նույն տեղում, էջ 17:

10 Նույն տեղում:

11 Նույն տեղում, էջ 101:

և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ, մեղայն, մեղայն Արարատին»¹²: Դա գալիս է ընդգծելու, որ որքան էլ տարբեր էին երկու արվեստագետներն իրենց աշխարհընկալումով, ըմբռնումներով, այդուամենայնիվ, նրանց գրողական աշխարհում կային ընդհանուր շատ գծեր ու նմանություններ:

Հատկանշական է, որ Շահան Շահնուրը 1968-ին Գուրգէն Մահարուն ուղարկած մի նամակում «Գարնանային...»-ի մասին թռուցիկ նկատում է. «Իրմէ կարդցած եմ մէկ հատիկ գիրք մը միայն, նամակներով գրուած սիրային վէպ մը, որ վերջնական ձախողանք մըն է, ըստ իս»¹³: Նա համարում էր, որ այդ վիպակը երիտասարդ տարիներին գրված անհաջող ու ձախողված գործ է:

Անշուշտ, շահնուրյան դիրքորոշումը խիստ տարբեր է հրապարակում եղած մյուս գրականագիտական հայացքներից, ինչը և բացատրվում է երկու գրողների աշխարհայացքային տարբեր ընկալումներով: Շ. Շահնուրը ոչ միայն գրողի ժամանակակերպական ուղղության հետևորդ լինելն էր սուր քննադատության ենթարկում, այլ նաև դեմ էր նամականու ժանրի ընտրությանը՝ այն համարելով ժամանակավրեպ:

Բոլոր վերապրողների պես Վ. Շուշանյանը ևս մաքառում էր ամենակույ գազանի՝ ուժացման դեմ, սակայն ապարդյուն: Վահագնի մի պահ թվում էր, որ ուժերը, ավյունն ու հայրենասիրությունը պիտի բավեն չնահանջելու և ազգային ինքնությունը պահպանելու համար, սակայն ավելի ուշ զգացմունքայնությունը տեղի էր տալիս գիտակցությանը, և նա այլևս կանգնած էր իրականության առջև. «Շատ անկաշառ, հպարտ ու ազնուական էր, որպէսզի կարենար ծռիլ վար, վազելու համար անոնց հետ հաճոյքի և ապականութեան տուներէն աշխարհի բոլոր արկածներուն: Բայց ժամանակը թեքեց զայն ու տեսակ մը գաղջութիւն դրաւ իր անհաշտ ու խիստ սպրեւու եղանակին մէջ: Վարժուեցաւ գոհանալ փոքրիկ ու դիրամատչելի հաճոյքներով ու աղջիկները սկսան սիրել զայն: Անոր սիրտը տխրեցաւ ու ղիս կապեց, բայց մարմինը գինովցաւ ու երջանկութեան տարօրինակ ու խռովիչ պատրանք մը արբեցուցեց զայն»¹⁴:

Այդ դժգույն, սև ու տրտում աչքերով տղան մնաց անցյալի գիրգ հիշողություններում: Նա, չունենալով այլընտրանք, կանգնած լինելով փակուղու առջև, հոգում կրելով երկվության ծանր ապրումը՝ հայտնվում է նահանջի վիհի եզրին: Ընթերցողին լսելի է դառնում հայ մոր աղէկտուր ողբը որդու «կորստի» համար. «Կ'անցնիս այս մեծ քաղաքին փողոցներէն՝ խորասուզուած մտահոգութիւններուդ ու ցաւերուդ մէջ, կքած նոր ու մեծ խոնջէնքներու տակ ու ես քեզ չեմ ճանչնար: Ես քեզ ծնայ մաքուր, պզտիկ ու արուագեղ: Ես քեզ ծնայ աղուոր, տաք ու անուշ աչքերով: Ես քեզ տեսայ երիտասարդ, խանդավառ ու դողդոջուն՝ բոլոր ազնիւ բաներուն համար... Հինա քու աչքերդ սուտ կը խօսին ու ականջներդ լեցուն են խարդախ,

12 **Շահան Շահնուր**, Նահանջը առանց երգի, մատենաշար «Յառաջ», N 15, Փարիզ, 1981, էջ 173:

13 **Շահան Շահնուր**, Նամականի, հ. 2, Նամակներ Գուրգէն Մահարիին և Անդրանիկ Անդրէասեանին: Կազմեց, խմբագրեց, ծանօթագրեց Գրիգոր Քէօսէեանը, Ուոթըրթաուն, 2004, էջ 83:

14 **Վազգէն Շուշանեան**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 33:

անբովանդակ ու շնական ձայներով, ձեռքերդ ծեր են ու խոնջ ու մոռցած են գուրգուրալ: Քու նայուածքդ երբեմն կը դառնայ կարծր, ցուրտ, դեգ ու կը վիրաւորէ սիրտս: Դուրս կը կռուիս հիմա, ձայնդ պաղ է, չար, վայրագ, քինախնդիր ու կը մխուի ուրիշներուն սրտին մէջ...»¹⁵:

Այս պարագայում ուժացումն այլևս ոչ թե վտանգ, այլ իրողություն էր: Օտար եզերքում տղան բռնել էր ձուլման ճանապարհը: Նոր ժամանակները փոխել էին նրա բարոյական ըմբռնումները, աշխարհընկալումը, կենսապահանջներն ու ձգտումները:

Վազգեն Շուշանյանը պաշտամունքի հասնող հիացմունք ուներ հայ մոր ու քրոջ հանդէպ: Նախ՝ կին-գաղափարի ընկալման հիմքում նա ուներ իր հոգատար ու բարի մոր, անուշիկ քրոջ նախակերպը: Սակայն երբ խոսքը վերաբերում է հայ աղջկան՝ իբրև կնոջ, Վ. Շուշանյանը չի «լիանում» ունեցածով. հայ աղջիկը երբեք չի բացվում սիրո առաջ ու դրանով վանում է հակառակ սեռին: «Գարնանային...»-ում Շուշանյան-Վահագնի առջև ինքնության հաստատման լրջագույն խնդիրը կար: Հայ երիտասարդը օտար ափերում պետք է հարձակվեր, սանձեր, իրենը դարձներ նաև ոչ այնքան հյուրընկալ, տաքուկ ու ապահով գիրկը: Հեղինակը ցավով նկատում է. «Մենք կը սիրենք այդ մարմինը, որ հայ կիներու մարմիններուն քաղցրութիւնը չունէր, որ փափուկ ու թանձր չէր միանգամայն, որ ամչկոտ չէր, որ հպարտ էր ու արձակուած...»¹⁶:

Այստեղ ևս Շուշանյանը թաքուն երկյուղով, գուցե նաև դառնությամբ հարում է Շ. Շահնուրի այն գաղափարին, թե հայ կինը ինչ է որ՝ երկու հաստ սրունքով ու քիչ մը բեղով կամ «Հայ աղջիկը մնաց հեռուն, մնաց լքուած, ան որ անհրաժեշտ էր մեր արիւնին, հակառակ իր տգեղութեան, իր չոր հպարտութեան և անմիջապէս մայրանալու ու ծերանալու հակամիտութեան...»¹⁷:

Ջուգահեռելով՝ մեջբերենք Վ. Շուշանյանի խոհը. «Միթէ՞ կան հայ աղջիկներ, կ'ըսէի դառնութեամբ ես ինձի, որ կը զգան ծառերուն հրաշքը գարնանային ու առաւօտեան լոյսին մէջ... Կը հարցնէի ես ինձի ցաւով, միթէ՞ կան հայ աղջիկներ, որ մութին մէջ կը հսկեն սիրոյ տառապանքէն վիրաւոր, աղջիկներ, որ վարսերնին կը քակեն ու կը թողլքեն բարձերուն վրայ ու թիկունքներնին կը ցախի համբոյրի, սիրոյ բառերու և հեշտութեան ծարաւէ»¹⁸: Այս պարագայում է, որ հայ երիտասարդը, փնտրելով ու չգտնելով սերը, կիրքը, արկածը, հեթանոսությունը (բառի գեղարվեստական իմաստով) հայուհու աչքերում, որոնում է օտար գրկում, օտար հրապոյրներում, որովհետև օտարները որքան բաց են սիրո ու սեռի առաջ. «... աղջիկներ, աղջիկներ միշտ, եթէ ոչ ինքնամատոյց՝ գէթ հիւրընկալ, եթէ ոչ նախայարձակ՝ գէթ քաջակերող ու մատուցող, պարզութեամբ, առատաձեռնութեամբ, երջանկութեամբ: Յետոյ անձկութեամբ ու ցաւով փնտռած եմ նոյն ձառագայթը հայ աղջիկներու աչքերուն մէջ, թանձր, թանձր, մութ աչքերուն մէջ, ահ, ահ... Ինչ ցաւ, ինչ ցաւ, երբ մարդ մը կը յուսայ լոյսի ու

15 Նույն տեղում, էջ 94:

16 Նույն տեղում, էջ 25:

17 **Շահան Շահնուր**, Նահանջը առանց երգի, էջ 140:

18 **Վազգեն Շուշանյան**, Գարնանային սիրոյ հեզ նամակներ, էջ 56:

կ'իյնայ խաւարի մութ ծոցին մէջ»¹⁹:

Հայ կինը մայրության գաղափար է, նաև իր սիրած բառով՝ «քույր», թեև կուզենար հայ կնոջ մեջ տեսնել կնոջն առհասարակ, իբրև սիրեցյալ՝ սիրո ու հաճույքի ծարավ: Վ. Շուշանյանի կռիվը ավանդույթի ընկալման դեմ է, ինչը դժվար է հաղթահարել: Սրա դեմ է արձակագրի պոռթկումը:

Հեղինակի մտակառույցում հայ կինը սիրո գործառույթի դիմաց առաջին հերթին ընտանիքի ապավեն է ու փարոս: Նա ազգային արժեքների փրկությունը տեսնում է արևմտահայ նոր ընտանիքի կերտման մեջ: Սակայն այդ արժեքները վերագտնելու արահետը գրողին հեռացնում է մեզանից մինչև հին աստվածներ, հեթանոսություն: Վ. Շուշանյանի մեջ առկա է հակասություն, որը նա գիտակցում է խորությամբ. ազգայինի պաշտպանությունը ընտանիքի հանգրվանում է, իսկ սիրո, գեղեցիկի խորհուրդը փոխում է ճանաչողության ծանրության կենտրոնը. կինը վեր է «ազգային» սահմանից:

Ջուզադրելով Շ. Շահնուրի և Վ. Շուշանյանի կերտած ընտանիքները՝ հարկ է ընդգծել, որ Շ. Շահնուրը ընտանիքի կառուցման հիմքում դնում է համամարդկային արժեքները՝ առանց ազգային պատկանելությունը կարևորելու, այն չի դիտում իբրև գերնպատակ, սակայն Վ. Շուշանյանի պարագայում ազգայինի մոտիվը որոշիչն ու գլխավորն է: Նա հայ ընտանիքի փրկությունը տեսնում է ազգայինի վերագարթոնքով: Պատահական չէ, որ «Գարնանային...»-ն ավարտվում է հայ ընտանիքի ստեղծման տեսլականով: Սա տիպաբանական հայացք է, որ հեղինակը երկրորդ անգամ պիտի գործածեր «Ճերմակ Վարսենիկ»-ում:

Ինչ խոսք, Վ. Շուշանյանը փորձում է ելքեր փնտրել հայ ընտանիքում նորագույն արժեքների ձևավորման հարցում, ինչը կապվում է նրա ռոմանտիկական աշխարհընկալման հետ: Իսկ Շ. Շահնուրը, լինելով ռեալիստական բարձունքներում, մնում է օրինաչափության սահմաններում՝ կասկածի տակ առնելով ազգային արժեքների վերընձյուղումը օտար միջավայրում:

Եվ Շ. Շահնուրը, և՛ Վ. Շուշանյանը հակադիր ըմբռումների մեջ են: Այն, ինչ ընդհանուր է այս արվեստագետների հայացքներում, մարդու ու մարդկայինի, հայի ու ազգայինի շարունակական փրկության որոնումն է: Մի հարցադրում, որ մինչ այսօր սփյուռքահայ գրականության անկյունաքարերից է:

Վ. Շուշանյանը Վահագնի միջոցով՝ նրա կրած տառապանքների ցուցադրումով ուրվագծում է իր իսկ դժվարին կյանքի ուղին: Վիպական գործողությունների նվազ զարգացումով հեղինակը կարողանում է բացահայտել իր սերնդի տառապանքի ուղիները և դրանց հաղթահարման եղանակները:

Նկատվում է, որ Վ. Շուշանյանը, սեփական հայացքների խոսափող դարձնելով Վահագնին, նրա բերանով ներկայացնում է իր դժգոհություններն ու ապրումները: Վիպակն աչքի է ընկնում սահուն ու գեղեցիկ գրական փայլուն ոճով, հեղինակին հատուկ հարուստ բառապաշարով և որ ամենից կարևորն է՝ հարցադրումների սրությամբ:

¹⁹ Նույն տեղում, էջ 57:

Անփոփելով՝ հարկ է ընդգծել, որ Վազգեն Շուշանյանի «Գարնանային սիրո հեզ նամակներ» նամականի-վեպը իր ուրույն տեղն ունի հայ գրականության անդաստանում: Վ. Շուշանյանի արծարծած թեման արդիական էր ինչպես իր ապրած ժամանակաշրջանում, այնպես էլ այսօր: Նրա գրականությունն առանձնանում է իր հետաքրքրական թեմատիկայով, ինքնատիպ ոճով, նոր խոսքով հանդես եկող կերպարներով: Գրողի ստեղծագործության ամենաբնորոշ ու կարևոր հատկանիշը օտար միջավայրում հայ երիտասարդի մաքառումների դժվարին ուղին մատնանշելն էր: Միաժամանակ՝ նա ազգային-քաղաքական հարցադրումներից վարպետությամբ անցում էր կատարում դեպի տղամարդ-կին հարաբերություններ և ներանձնային կոնֆլիկտներ:

Վազգեն Շուշանյանի կյանքը մաքառում ու պայքար է եղել. պայքար հասարակարգի, օտար բարոյական արժեքների, ուժացման դեմ: Անցյալի ու ներկայի խաչմերուկում նա որոնեց գեղեցիկն ու բնականը, սերն ու կիրքը, ապաբարոն ու բարոյականը, և այս ամենը՝ միայն ազգային ինքնության հաստատման ճանապարհին: Ի հեճուկս «ապաստած ու տխուր հասարակարգին» Շուշանյանը, իր իսկ խոստովանությամբ, ուներ «թաքուն ու հրաշալի հարստություն մը»՝ «մանուկ ու պզտիկ սիրտ մը», և այն, ինչ իր սիրտը կուզեր՝ «...ոստ մըն է ծաղկած, գարնան շեմին վրայ, արևածագի լոյսի մէջ: Ինչ որ կ'ուզէ արևն է առտուան, բոցը արևամուտին ու ջերմութիւնը ամրան ու սիրոյ աղուոր գիշերներուն»²⁰:

Այլ հարց է՝ գտնվ փնտրածը. գտանք մենք՝ ընթերցողներս:

Իսկ ինքն իրեն պահեց «կորսվող ընտանիքի» կերպը: Պահեց՝ մաքառելով, համառությամբ:

Summary

SELF IDENTITY FORMULA OF VAZGEN SHUSHANIAN

Lusine V. Tonoyan

A French– Armenian writer Vazgen Shushanian’s “Mild Letters of Spring Love” Novel helps us to realize the changing moral and national values back in 20–30–es of the last century. A life story of a whole Armenian generation fighting for survival is first of all presented here, a reflection of political views and opinions, a personal struggle between inner self and outer world, which is not always obvious.

“Spring” is considered one of the best works of Shushanian, though later strongly criticized by Shahan Shahnur.

Shahnur and Shushanian have different perceptions of things. The only common thing between them is the constant search of humanism, Armenian identity, and national salvation — a question which has been the cornerstone of Diaspora Armenian literature until now.

²⁰ Նույն տեղում, էջ 18: